ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» ապրիլի 2014թ. N__-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԱՆԱՍՏԱՍ ՄԻԿՈՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն պետական, քաղաքական գործիչ Անաստաս Միկոյանի հիշատակը հավերժացնող հուշարձանը Երևան քաղաքի Իսահակյան-Կորյունի փողոցների միջանկյալ՝ Գ. Քոչարի փողոցին զուգահեռ պուրակում տեղադրելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՆԱՍՏԱՍ ՄԻԿՈՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Անաստաս Հովհաննեսի Միկոյանը ծնվել է 1895 թվականի նոյեմբերի 13-ին, Սանահին գյուղում:

1924 թվականին ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: 1915 թվականին ընդունվելով Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության շարքերը՝ 1915-1920թթ. հեղափոխական աշխատանք է կատարել և խմբագրել է մի շարք թերթեր:

1920-1926թթ. Անաստաս Միկոյնան աշխատել է Նիժնի Նովգորոդում, Դոնի Ռոստովում: 1926 թվականից պաշտոնավարել է ԽՍՀՄ կառավարությունում (արտաքին և ներքին առևտրի, մատակարարման, սննդի արդյունաբերության ժողկոմ.): 1937-1946թթ. եղել է Ժողկոմխորհրդի փոխնախագահ: Հայրենական պատերազմի տարիներին (1941-1945թթ.) Ա. Միկոյանը ղեկավարել է խորհրդային բանակի մատակարարման գործը:

1946-1955թթ. եղել է ԽՍՀՄ Նախարարների խորհրդի փոխնագահը, 1955-1964թթ.-ին՝ առաջին փոխնախագահը, 1964-1965թթ.-ին ԽՍՀՄ ԳԽ նախագահության նախագահը, 1935-1966թթ.-ին՝ ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի (նախագահության) անդամ:

Ա. Միկոյանը 1937-1974թթ.-ին ընտրվել է ԽՍՀՄ ԳԽ պատգամավոր:

Անաստաս Հովհաննեսի Միկոյանը անցել է քաղաքական և պետական գործունեության բարդ ուղի: Նա խորհրդային տնտեսությանը նվիրված մի շարք աշխատությունների և հուշագրությունների հեղինակ է: Պարգևատրվել է ԽՍՀՄ տարբեր երկրների բազմաթիվ շքանշաններով և մեդալներով:

Խորհրդային Միության պետական և կուսակցական գործիչ Անաստաս Միկոյանը 1943 թվականին արժանացել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման:

Ա. Միկոյանը մահացել է 1978 թվականի հոկտեմբերի 21-ին:

Անաստաս Միկոյանի հիշատակը հավերժացնող հուշարձանը Երևան քաղաքի Իսահակյան-Կորյունի փողոցների միջանկյալ՝ Գ. Քոչարի փողոցին զուգահեռ պուրակում տեղադրելու համար Երևանի քաղաքապետին միջնորգաիր է ներկայացրել Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Տ. Բարսեղյանը:

Կ. Դեմիրճյանի ղեկավարության տարիներին (1974–88թթ.) շահագործման են հանձնվել «Զվարթնոց» և Գյումրիի օդանավակայանները, Երևանի մետրոպոլիտենի առաջին հերթը, Մարզահամերգային համալիրը (1999թ.-ից՝ Կարեն Դեմիրճյանի անվան), կառուցվել են Արփա–Սևան թունելը, «Հրազդանմաշ», «Պոզիստոր», «Իմպուլս», «Մարս» և այլ գործարաններ, Մասիս–Նուռնուս և Հրազդան– Իջևան երկթուղային մայրուղիները, գրապալատը և այլն:

Հաշվի առնելով Անաստաս Միկոյանը ավանդը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը, ըստ որի՝ հուշարձանի իրականացման վերաբերյալ առաջարկությունը նախապես համաձայնեցվում է համապատասխան համայնքի ավագանու հետ, ուստի Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն առաջարկությունը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԱՆԱՍՏԱՍ ՄԻԿՈՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Անաստաս Միկոյանի հիշատակը հավերժացնող հուշարձանի տեղադրմանը համաձայնություն տալու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԱՆԱՍՏԱՍ ՄԻԿՈՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Անաստաս Միկոյանի հիշատակը հավերժացնող հուշարձանի տեղադրմանը համաձայնություն տալու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ